ՍԻՐՏԸ ԴՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այսօր Արցախում է վճռվում համայն հայության ճակատագիրը: Ամեն մի ճշմարիտ հայ հիմա այնտեղ է, օգնում է, ինչով ի զորու է: Արցախակաց աշխարհին, նրա ազատության պայքարին սատարելով է պայմանավորված նաև «Արցախ» հայրենակցական միության ընդունդը: «Արցախն» ապրում, շնչում, գործում է հանուն Արցախի: Երբեմն տեսանելի, շոշափելի է այդ օգնությունը, ավելի հաճախ՝ անկնատ: Բայց հազարավոր փախստականներ, բազմաթիվ վիրավորներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ լավ գիտեն այդ օգնության մասին: Ով թեկուզ մի անգամ մասնակցի միության վարչության ու նախագահության նիստերից մեկին, կհամոզվի, որ այնտեղ հավաքված են հայրենի լեռնաշխարհի համար այրվող մարդիկ: Նրանցից մեկն էլ Համլետ Հակոբյանն է:

Նա ամեն օր այնտեղ է՝ «Արցախ» հայրենակցական միությունում: Մերթ ինքնամփոփ ու լռակյաց է, մերթ՝ հախուռն ու կատակասեր, իսկ ավելի հաճախ ալեկոծվում, ափերից դուրս է գալիս: Եվ այս ամենն ունի իր պարզ բացատրությունը. նրա տրամադրության բոլոր ելևէջները պայմանավորված են նախ և առաջ Արցախով, Հայաստանի սահմանամերձ շրջաններով, մարտադաշտերից հասնող տխուր կամ հույս ներշնչող լուրերով, վերաբերեն դրանք Մարտակերտի շրջանի հայրենի Մաղավուզին, Հադրութի շրջանի Մելիքաշեն գյուղին, թե՛ Կապանի, Գորիսի կամ Տավուշի ոմբակոծվող շեներին:

Այս տարվա սկզբներին, երբ Արցախից առաջին ծանր վիրավորներին ուղղաթիռներով հասցրին Երևանի հիվանդանոցները, Համլետ Հակոբյանը բարի և անհանգիստ սրտի մղումով առաջինն այցելության գընաց իր անծանոթ հայրենակիցներին, կարեկցեց տառապանքի ծովերով անցած երիտասարդներին, տեսավ պատերազմի սոսկալի դեմքը: Երբ վիրավորների հոսքը մեծացավ, «Արցախ» հայրենակցականի ղեկավարությունը նպատակահարմար գտավ ստեղծել վիրավոր ազատամարտիկներին օգնող մի հանձնաժողով: Եվ բնական ու հասկանալի է, որ այդ հանձնաժողովի նախագահ ընտրվեց հայրենակցականի վարչության անդամ Համլետ Հակոբյանը: Հանձնախմբի ակտիվիստներ Էդիկ Ներսիսյանի, Համիկ Հարությունյանի, Սուսանա Հարությունյանի, Միշա Ազարյանի և մյուսների ջանքերով ցուցաբերվող այդ օգնությունը բազմազան է՝ ընկրսած ֆինանսական ու նյութական օժանդակությունից, ազատամարտիկներին հանգստյան տներ և բուժարաններ ուղարկելուց, Ստեփանակերտում փախստականների հետ տարվող աշխատանքից և վերջացրած առավել բարդ վիրահատությունների համար արտասահման ուղարկելու հետ կապված ճանապարհածախսերով: Ինչ խոսք, ազատամարտիկները, որ հիմնականում 18—30 տարեկան են, ամենից առաջ կարիք ունեն հոգեկան, բարոյական սատարումի, գթասրտության և մարդկային անկեղծ կարեկցանքի: Ահա թե ինչու Համլետ Հակոբյանի համար, ինչպես ասում են, շաբաթ-կիրակի չկա, օրերով հիվանդանոցներում է, վիրավորներից յուրաքանչյուրին իր սրտի ջերմությունն է բաժին հանում: Նա, հիրավի, գտել է իր իսկական կոչումը, օգնում է մարդկանց՝ սիրտը դրած այդ օգնության մեջ: Մի տեսակ հետին պլան են մղվել և ասես մոռացության տրվել ճարտարագիտության համալսարանի փիլիսոփայության ամբիոնի դոցենտությունը, հարմարավետ աշխատավայրը, գիտական շրջապատը... Նա հիմա հայրենիքի շարքային զինվորն է և այս ճանապարհով է ինքնամոռաց օգնում Արցախի ազատամարտին, դրա մեջ գտնելով իր տառապալից երջանկությունը:

Երևանի 17 հիվանդանոցներում բուժվող վիրավոր ազատամարտիկներին ցույց տրված մեծ օգնության մեջ իրենց բաժինն ունեն նաև մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ՝ «Գարուն» արտադրական միավորումը, մսի կոմբինատը, «Մասիս—7» կոշիկի ֆաբրիկան, «Գարդման» հասարակական կազմակերպությունը, այլ ձեռնարկություններ ու կազմակերպություններ, կոոպերատիվներ, անհատ բարեգործներ: Այդ աշխատանքները կոորդինացրել է «Արցախ» հայրենակցականը՝ վիրավոր ազատամարտիկներին օգնելու համար ստեղծված հանձնաժողովի միջոցով:

Ռուբեն ԳՐԻԳՈՐՅԱՆ